ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմիի 1

№ 1349-Ա « 11 » ապրիլի 2025թ.

ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի հ.310-Ա որոշումը (այսուհետ՝ Որոշում).

1.Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից ձեռք բերված, Որոշման հավելվածում նշված գույքը Երևան համայնքին հանձնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել գույքի հանձնման-ընդունման հանձնաժողովի նախագահին՝ իրականացնել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գույքի՝ Երևան համայնքին հանձնելու գործընթացը:

3.Լիազորել գույքի հանձնման-ընդունման հանձնաժողովի նախագահին՝ Երևանի քաղաքապետի անունից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրենի հետ կնքել գույքի նվիրատվության պայմանագիր:

4. Հանձնարարել գույքի հանձնման-ընդունման հանձնաժողովի նախագահին՝ հանձնման-ընդունման գործընթացի ավարտից հետո, եռօրյա ժամկետում փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն՝ համապատասխան հաշվապահական ձևակերպումներն իրականացնելու նպատակով:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել գույքի հանձնման-ընդունման հանձնաժողովի նախագահի վրա:

6.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
11.04. 2025թ.
N 1349-Ա որոշման

Կ Ա Զ Մ
«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊՀ-Ի ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ

Ս. Մելքոնյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետի պաշտոնակատար

Հանձնաժողովի անդամներ

Հ. Խաչատրյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետի տեղակալ
Ա. Խուդոյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների բաժնի առաջատար մասնագետ
Ա. Ավետիսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության գլխավոր մասնագետ
Ա. Եսոյան	«ԲԾԻԳ» ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**